ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՖԻՐՄԱՆԵՐԻ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գ. Մ.

Շուկաների կառուցվածքին առնչվող տնտեսագիտական գրականության մեջ, ինչպես նաև ապրանքային շուկաների վերլուծության ժամանակ հաճախակի է օգտագործվում «գերիշխող դիրք» հասկացությունը: Դա բնութագրում է շուկայում ֆիրմայի այնպիսի շուկայական իշխանություն, որը մրցակիցներին և սպառողներին կամ ապրանքատերերին շուկայական պայմաններ թելադրելու հնարավորություն է տալիս: Իսկ շուկայական իշխանությունը վաճառողի կամ գնորդի՝ ապրանքի գնի վրա ազդելու ունակությունն է[1]:

Տարբեր երկրների մրցակցային օրենսդրություններում ապրանքային շուկաներում գերիշխող դիրքը որոշելիս հաճախ մոտենում են երկու չափանիշով՝ մենաշնորհի գործունեությամբ և շուկայի կառուցվածքով: Անկախ նրանից, թե որ չափանիշն է դրված գերիշխող դիրքի որոշման հիմքում, դրա բնութագրման ժամանակ օգտագործվում են քանակական և որակական ցուցանիշներ: Հարկավոր է նկատի ունենալ, որ Եվրոպայի շատ երկրներում իրավաբանները և տնտեսագետները գերիշխող դիրքը միատեսակ բնութագրող քանակական և որակական ցուցանիշներ են մշակել, որը թույլ է տալիս միասնականացնել գործող օրենսդրությունները[2]:

ԱՊՀ երկրների մրցակցային օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասում գերիշխող դիրքը որոշվում է միայն քանակական ցուցանիշներով (Ադրբեջանի, Հայաստանի[3], Մոլդովայի, Ղազախստանի, Ղրղզստանի և Վրաստանի Հանրապետություններում)[4],

---

[1] Տե՛ս *Микроэкономика (под общ. ред. д.э.н., профессора А. В. Сидоровича), М., 2002, с. 120;* **Пиндайк Р., Рабинфельд Д.,** *Микроэкономика (пер. с англ.), СПб., 2002, с. 298.*

[2] **Князева И. В.,** *Антимонопольная политика в России, М., 2006, с. 225.*

[3] Մինչև 2007 թ. փետրվարի 22-ին օրենքում կատարված փոփոխությունները շուկայում տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքը որոշելիս Հայաստանի օրենսդրությամբ հնարավոր էր քանակական ցուցանիշներին զուգահեռ որակական պարամետրեր կիրառել:

[4] *Закон "Об антимонопольной деятельности", 15.XII.1998, N 590-IГ (Азербайджан., 19.III.1999, N 62); Закон Грузии "О монополистической деятельности и конкуренции", 25.YI.1996, N 288-1с; Закон Кыргызской Республики "Об ограничении монополистической деятельности, развитии и защите конкуренции" (Введен в действие от 15.IY.1994, N 1488-XII) (Ведомости Жогорку Кенеша Кыргызской Республики, 1994, N 5, с. 163); Принят Законодательным собранием Жогорку Кенеша Кыргызской Республики, 26.XI.1998; Закон Республики Казахстан "О конкуренции и ограничении монополистической деятельности", 7.YII. 2006, N 173-III ЗРК; Закон Республики Молдова "О защите конкуренции", 30.YI. 2000, N 1103-XIV.*

մյուսում՝ և քանակական, և որակական ցուցանիշներով (Բելոռուսի, Տաջիկստանի[5], Ուզբեկստանի և Ուկրաինայի Հանրապետություններում, Ռուսաստանի Դաշնությունում)[6]: Ուզբեկստանի օրենսդրությամբ, շուկայում 65 և ավել տոկոս բաժին ունեցող սուբյեկտը համարվում է գերիշխող դիրք ունեցող, իսկ 35-65% միջակայքում բաժին ունեցող սուբյեկտը կհամարվի գերիշխող դիրք ունեցող, եթե կարգավորող մարմինը, շուկայում ունեցած սուբյեկտի բաժնի կայունությունից, մրցակիցներին պատկանող բաժինների հարաբերական չափերից և որակական այլ չափանիշներից ելնելով, նրան կգնահատի որպես գերիշխող դիրք ունեցող:

Տաջիկստանի օրենսդրությամբ, շուկայում 65 և ավել տոկոս բաժին ունեցող տնտեսվարող սուբյեկտը համարվում է գերիշխող դիրք ունեցող, բացառությամբ այն դեպքերի, երբ, կապացուցի, որ, չնայած 65 և ավել տոկոս բաժին ունենալու հանգամանքին, շուկայի վրա ազդելու հնարավորությունները սահմանափակ են: Շուկայում 35-65% բաժին ունեցող սուբյեկտը կհամարվի գերիշխող դիրք ունեցող, եթե կարգավորող մարմինը կհիմնավորի, որ սուբյեկտն ունի շուկայի վրա ազդելու իրական հնարավորություններ: Շուկայում 35%-ից ցածր բաժին ունեցող սուբյեկտը չի համարվի գերիշխող դիրք ունեցող[7]:

Ռուսաստանի Դաշնության մրցակցային գործող օրենսդրությամբ, ապրանքային շուկայում 50%-ից ավել բաժին ունեցող տնտեսվարող սուբյեկտը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հակամենաշնորհային օրենսդրության խախտման գործերի քննարկման կամ տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ հսկողության սահմանման դեպքում չի պարզվի, որ, չնայած նշված սահմանագծի գերազանցմանը, տնտեսվարող սուբյեկտի դիրքը չի կարող լինել գերիշխող: Շուկայում 35-50% բաժին ունեցող սուբյեկտը կարգավորող պետական մարմնի կողմից կհամարվի գերիշխող դիրք ունեցող՝ ելնելով ապրանքային շուկայում մրցակիցների բաժինների հարաբերական չափերի համեմատ տնտեսվարող սուբյեկտի բաժնի անփոփոխ լինելուց կամ աննշան փոփոխությունից կամ էլ այլ

[5] Նախկին օրենքով, Տաջիկստանում առաջնորդվում էին միայն որակական ցուցանիշներով (տե՛ս *Закон Республики Таджикистан "Об ограничении монополистической деятельности и развитии конкуренции", 13.XII.1997, N 525).* Լրաբեր 3-8

[6] *Закон Республики Беларусь "О противодействии монополистической деятельности и развитии конкуренции", от 10.XII. 1992, N 2034-XII. В редакции Закона от 10.I.2000, N 364-З (Национальный реестр правовых актов Республики Беларусь, 2000, N 8, 2/139); Федеральный закон РФ 135-ФЗ "О защите конкуренции" (Российская газета, 27.YII.2006); Закон Республики Узбекистан "О конкуренции и ограничении монополистической деятельности на товарных рынках", 27.XII.1996, N 355-I; Закон Республики Узбекистан N 832-I от 20.YIII.1999; Постановление Олий Мажлиса Республики Узбекистан N 356-I от 27.XII.1996. "О введении в действие Закона Республики Узбекистан "О конкуренции и ограничении монополистической деятельности на товарных рынках", 27.XII.1996, N 355-I; Закон Республики Таджикистан "О конкуренции и ограничении монополистической деятельности на товарных рынках", 29.XI.2000, N 11.*

[7] Մինչև 2006 թ. հոկտեմբերի 26-ը Ռուսաստանի Դաշնության մրցակցային օրենսդրությամբ գերիշխող դիրքի որակման նույն չափանիշներն էին դրված:

չափանիշներից: Շուկայում 35%-ից ցածր բաժին ունեցող սուբյեկտը, բացառությամբ ֆինանսական շուկաների, չի համարվի գերիշխող դիրք ունեցող, բացառությամբ օրենքով սահմանված, ինչպես նաև համատեղ գերիշխելու դեպքերի:

Ուկրաինայի օրենսդրությամբ, սուբյեկտը ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք, եթե չունի մրցակից կամ չի հանդիպում էական մրցակցության՝ շուկայի մուտքի խոչընդոտների առկայության պայմաններում, շուկայում 35%-ից ավել բաժին ունենալու դեպքում, եթե չի հիմնավորի, որ հանդիպում է նշանակալից մրցակցության, կամ շուկայում ունի 35% և պակաս բաժին, եթե չի հանդիպում էական մրցակցության, մասնավորապես, մրցակիցների համեմատաբար ոչ մեծ բաժինների պարագայում, ինչպես նաև համատեղ գերիշխելու դեպքում:

Ղազախստանի օրենսդրությամբ՝ շուկայում 35 և ավել տոկոս բաժին ունեցող սուբյեկտը համարվում է գերիշխող դիրք ունեցող, Ղրղզստանի օրենսդրությամբ՝ առնվազն 35% բաժին ունեցող կամ յուրաքանչյուր տարի կարգավորողի սահմանած մեծությունը գերազանցող սուբյեկտը: Բելոռուսի օրենսդրությամբ՝ եթե սուբյեկտի բաժինը գերազանցում է կարգավորող մարմնի սահմանած մեծությունը կամ չի գերազանցում այդ մեծությունը, բայց ելնելով շուկայում սուբյեկտի ունեցած բաժնի կայունությունից, մրցակիցներին պատկանող բաժինների հարաբերական չափերից և այլ չափանիշներից՝ կարգավորողը նրան որակում է իբրև գերիշխող դիրք ունեցող:

Որոշ երկրներում ապրանքային շուկաների գերիշխող դիրքի սահմանային չափը որոշում է կարգավորող մարմինը (Բելոռուսի և Վրաստանի հանրապետություններ), մյուսներում օրենքով է նախատեսված:

Մի շարք երկրների օրենսդրություններում, հակամրցակցային համաձայնությունները սահմանափակելու, ինչպես նաև խոշոր ֆիրմաների գործողությունները տեսադաշտում պահելու նպատակով, ամրագրված է համատեղ գերիշխելու դրույթ (Բելոռուսի, Ղազախստանի, Հայաստանի, Ուկրաինայի Հանրապետություններում և Ռուսաստանի Դաշնությունում): Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրություններում համատեղ գերիշխող մասնակիցների նկատմամբ նախատեսված է նվազագույն շեմի դրույթ, որից ցածր բաժին ունենալու դեպքում սուբյեկտը չի կարող գերիշխող դիրք ունեցող համարվել: Ղազախստանի օրենսդրությամբ, նվազագույն շեմը 15%-ից ցածր բաժին ունենալն է, իսկ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ՝ 8%-ից: Բելոռուսի և Ուկրաինայի պարագայում կարգավորող մարմինն է որոշում համատեղ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների նվազագույն շեմը՝ կախված դրանց միջև մրցակցության առկայությունից: Հայաստանում օրենքի փոփոխությունից հետո համատեղ գերիշխելու դրույթի ամրագրումը ստորին շեմի սահման չի նախատեսում[8]: Մասնավորապես, օրեն-քի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով համատեղ գերիշխելու դրույթներ են նախատեսվել համապատասխանաբար՝ երկու և երեք տնտեսվարող

[8] Տե՛ս ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը [ՀՀՊՏ, 2007, N 18 (542)]:

սուբյեկտների համար. եթե առաջին դեպքում երկու սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն մեկ երկրորդ է, երկրորդ դեպքում՝ երեք սուբյեկտներինը՝ առնվազն երկու երրորդ: Նման պարագայում նույնիսկ շուկայում 3-4% բաժին ունեցող սուբյեկտը կարող է գերիշխող դիրք ունեցող համարվել (օրինակ, եթե առաջին երեք խոշոր սուբյեկտները շուկայում ունեն համապատասխանաբար՝ 32, 32 և 3% բաժին): Նշված բացը մասամբ լրացնելու միտումով ապրանքային շուկայում գերիշխող դիրքի որոշման դեպքում կարգավորող մարմինը ենթաօրենսդրական ակտով (այսուհետև՝ Կարգ) որոշակի սահմանափակումներ է մտցրել[9]: Եթե օրենքը թույլատրում է վերոհիշյալ օրինակում բերված երեք սուբյեկտներին էլ գերիշխող համարել, ապա, Կարգի համաձայն, համատեղ գերիշխող կճանաչվեն առաջին երկու սուբյեկտները[10]:

ԱՊՀ երկրների զգալի մասում որպես գերիշխող դիրքի չարաշահման չափանիշ են ամրագրված մրցակցության սահմանափակումը և սպառողների, այդ թվում՝ ֆիզիկական անձանց, շահերի ոտնահարումը: Ուզբեկստանի և Տաջիկստանի Հանրապետությունների մրցակցային օրենսդրություններով, գերիշխող դիրքի չարաշահման չափանիշը մրցակցության սահմանափակումն է կամ այլ տնտեսվարողների շահերի ոտնահարումը: Այդ առումով խոսք չկա ֆիզիկական անձանց շահերի ոտնահարման մասին:

Մի շարք երկրներում ապրանքային շուկաների գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյան (ռեեստր) են վարում: Կարգավորողի կողմից ֆիրմաների գրանցումը ռեեստրում հնարավորություն է տալիս վերահսկողություն սահմանել տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ[11]: Գերիշխող ֆիրմաների գրանցամատյանի առկայությունը կարգավորող մարմնին հնարավորություն է տալիս դրանց որոշակի գործողությունների նկատմամբ հսկողություն սահմանել, միաժամանակ, տեսադաշտում պահելով նման սուբյեկտներին՝ դրանցից պարբերաբար տեղեկատվություն ստանալ: Եթե զարգացած երկրներում կարգավորող մարմինները գրանցամատյանի վարման գործառույթ չեն իրականացնում, քանի որ նման սուբյեկտների նկատմամբ վերահսկողություն սահմանելու լայն հնարավորություններ ունեն, ապա ԱՊՀ որոշ երկրներում (Բելոռուսի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի հանրապետություններում և Ռուսաստանի Դաշնությունում) վերահսկողության նման գործառույթ օգտագործում են վերահսկողության մեխանիզմների սահմանափակության պատճառով: Սակայն վերահսկողության այդ գործիքը միշտ չէ, որ արդյունավետ է կիրառվում: Ըստ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանն (*OECD*) առընթեր ֆինանսական և գործնական հարաբերությունների

---

[9] Տե՛ս «Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի որոշման կարգը» [Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր, 1.XI.2007, N 29 (269)]:

[10] Եթե գերիշխող դիրքի որակման՝ օրենքով նախատեսված չափանիշներին միաժամանակ համապատասխանում են շատ և քիչ թվով սուբյեկտներ, ապա, Կարգի համաձայն, որպես չափանիշ ընտրվում է ավելի քիչ թվով սուբյեկտների համատեղ բաժինը:

[11] **Միքայելյան Մ. վ.,** Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2005, էջ 171:

բաժնի խորհրդատու Սառա Ռեյնոլդսի, Ռուսաստանի Դաշնությունում գերիշխող ֆիրմաների ընդգրկումը ռեեստրում դրանց համար առանձնահատուկ պարտավորություններ և այլ պաշտոնական հետևանքների չի հանգեցնում[12]: Հայաստանում կարգավորող մարմինը տարեկան երկու անգամ նման սուբյեկտներից տեղեկատվություն է ստանում արտադրության ծավալների, արտադրանքի գների կամ այդ գների փոփոխությունների վերաբերյալ: Մինչդեռ տնտեսական համակենտրոնացման բացահայտումն ապահովող տեղեկատվություն գերիշխող ֆիրմաներից չի պահանջվում: Այս առումով որոշակիորեն հետաքրքիր է Ղազախստանի Հանրապետության փորձը: Մրցակցային նոր օրենքի համաձայն, ռեեստրում գրանցված տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են ապրանքների գների բարձրացումից 30 օր առաջ հակամենաշնորհային մարմնին տեղյակ պահել գների բարձրացման մասին՝ բերելով համապատասխան հիմնավորումներ դրա անհրաժեշտության վերաբերյալ:

ԱՊՀ, ինչպես նաև Եվրոմիության երկրների ապրանքային շուկաներում սուբյեկտների գերիշխող դիրքի կարգավորման գործիքներից է պատժամիջոցների ինստիտուտը (տե՛ս աղյուսակը):

Հայաստանի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների կողմից այդ դիրքի չարաշահումների դեպքում կարգավորող մարմինը կարող է նշանակել տուգանք՝ իրավախախտման նախորդ տարվա հասույթի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավել քան 300 մլն դրամ: Մեկ տարվա ընթացքում գերիշխող դիրքը երկու և ավել անգամ չարաշահող սուբյեկտները կարող են ապախոշորացվել[13]:

Վրաստանում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համար կիրառվում են նյութական, վարչական և քրեական պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտի կողմից գերիշխող դիրքի չարաշահման դեպքում հակամենաշնորհային ծառայությունը վերջինիս կարող է պարտադրել դադարեցնել իրավախախտումը[14]: Հակամենաշնորհային ծառայության պահանջը չկատարելու դեպքում Վրաստանի վարչական օրենսգրքի համաձայն (հոդված 159-2), նախատեսվում է տուգանք՝ 1000-ից մինչև 3000 լարիի չափով[15]:

Բելոռուսի Հանրապետությունում շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների նկատմամբ պետական հատուկ վերահսկողություն է սահմանվում ապրանքների ծավալների և որակների, գների մակարդակների և այլ ցուցանիշների վերաբերյալ: Գերիշխող դիրքի չարաշահման հետևանքով ստացված շահույթը դատարանի միջոցով ենթակա է գանձման պե-

---

[12] *Антимонопольное законодательство и конкурентная политика Российской Федерации. Экспертная оценка ОЭСР, 2004, с. 38.*

[13] Նշված պատժամիջոցը կիրառվում է 2007թ. փետրվարի 22-ին Ազգային Ժողովի կողմից օրենքում կատարված փոփոխության հիման վրա: Մինչև օրենքի փոփոխությունը նման չարաշահման համար նախատեսվում էր տուգանքի նշանակում իրավախախտման ամսի մեկին նախորդող օրացուցային տարվա՝ տվյալ ապրանքատեսակի իրացումից ստացված հասույթի մեկ տոկոսի չափով:

[14] *Закон Грузии "О монополистической деятельности и конкуренции", 25.VI.1996,N 288-1с.*

[15] *Общий административный кодекс Грузии, 25.VI.1999, N 2181-11с.*

տական բյուջե, իսկ այլ սուբյեկտներին հասցված վնասը ենթակա է փոխհատուցման: Հակամենաշնորհային մարմնի որոշումը կատարելուց խուսափելու, ինչպես նաև ոչ ժամանակին կատարելու համար նախատեսված է տուգանք՝ խախտմանը նախորդող տարում ստացած եկամտի մինչև 10%-ի չափով:

Աղյուսակ

ԱՊՀ մի շարք երկրներում գերիշխող դիրքի չարաշահման դեպքում կիրառվող պատժամիջոցների տեսակները

Պատժամիջոցներ / Երկրներ	Ապախոշորացում	Այլ սուբյեկտների վնասի փոխհատուցում	Խախտումով ստացված եկամտի (շահույթի) բռնագանձում	Տույժ և տուգանք	
				չարաշահման համար	կարգադրությունը չկատարելու համար
1. Ադրբեջանի Հանրապետություն	+	+	+	-	+
2. Բելոռուսի Հանրապետություն	+	+	+	-	+
3. Հայաստանի Հանրապետություն	+	+	-	+	+
4. Մոլդովայի Հանրապետություն	+	+	-	+	+
5. Ղազախստանի Հանրապետություն	+	+	+	+	+
6. Ղրղզստանի Հանրապետություն	+	+	+	+	+
7. Ռուսաստանի Դաշնություն	+	+	+	+	+
8. Վրաստանի Հանրապետություն	-	+	-	+	+
9. Տաջիկստանի Հանրապետություն	+	+	-	-	+
10. Ուզբեկստանի Հանրապետություն	+	+	-	-	+
11. Ուկրաինայի Հանրապետություն	+	+	-	+	+

Ղրղզստանի մրցակցային օրենսդրության համաձայն, գերիշխող դիրքը չարաշահող սուբյեկտների նկատմամբ կիրառվում են պատասխանատվության հետևյալ միջոցները. տնտեսվարող սուբյեկտների ապախոշորացում, օրենսդրության խախտումով ստացված շահույթի բռնագանձում, հասցված վնասի փոխհատուցում և դրամական տուգանք: Տուգանքի մեծությունը կարող է լինել մինչև 5000 սոմի չափով՝ տնտեսվարող սուբյեկ-

տի համար, իսկ խախտումը թույլատրող պաշտոնատար անձանց համար՝ մինչև 3 ամսվա աշխատավարձի չափով:

Տաջիկստանում կարգավորող մարմինը (էկոնոմիկայի նախարարությունը) իրավունք ունի ապախոշորացնել գերիշխող դիրքը չարաշահող սուբյեկտը, խախտումը դադարեցնելու, նախնական վիճակը վերականգնելու, հասցված վնասը փոխհատուցելու և տուգանելու վերաբերյալ որոշում կայացնել: Կարգավորող մարմնի որոշումները չկատարելու համար տնտեսվարող սուբյեկտները տուգանվում են նախորդ տարվա ստացած շահույթի 3-10%-ի չափով, իսկ դրանց պաշտոնատար անձինք՝ ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի եռակի չափով:

Ռուսաստանի Դաշնության հակամենաշնորհային օրենսդրությամբ, գերիշխող դիրքը պարբերաբար խախտող սուբյեկտները դատական կարգով ապախոշորացվում են (վարկային կազմակերպությունները՝ կենտրոնական բանկի համաձայնությամբ): Կիրառվում են նաև գերիշխող դիրքի չարաշահման հետևանքով ստացված շահույթի բռնագանձման, նման սուբյեկտներին և դրանց պաշտոնատար անձանց տուգանման պատժամիջոցներ:

Ուզբեկստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվում է գերիշխող դիրքը չարաշահող սուբյեկտների նկատմամբ դատական կարգով ապախոշորացման կամ դրանից կառուցվածքային ստորաբաժանման առանձնացման վերաբերյալ որոշում կայացնել: Գերիշխող դիրքը չարաշահելու հետևանքով այլ սուբյեկտներին հասցված վնասը ենթակա է փոխհատուցման: Խախտումը վերացնելու վերաբերյալ արված կարգադրությունը չկատարելու համար իրավաբանական անձանց համար սահմանված տուգանքը նվազագույն աշխատավարձի 100-ից 500-ապատիկի չափով է, ֆիզիկական անձանց համար՝ 5-ից 7-ապատիկի չափով:

Մոլդովայի Հանրապետությունում գերիշխող դիրքը չարաշահող սուբյեկտների նկատմամբ կիրառվում են հարկադիր բաժանման, այլ սուբյեկտներին հասցված վնասի փոխհատուցման և վարչական տուգանքների նշանակման պատժամիջոցներ: Հարկադիր բաժանումն իրականացվում է գերիշխող դիրքը երկու և ավելի անգամ խախտող սուբյեկտների նկատմամբ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի համաձայն: Ազատ մրցակցության սահմանափակման կամ բացակայության դեպքում, գերիշխող դիրքի չարաշահում թույլ չտալու նպատակով, կառավարությունը կարող է կարգավորել տվյալ ապրանքների գները:

Ուկրաինայի մրցակցային օրենսդրության համաձայն, գերիշխող դիրքի չարաշահման համար տնտեսվարող սուբյեկտը տուգանվում է տվյալ ապրանքի իրացումից ստացված՝ նախորդ տարվա հասույթի 10%-ի չափով: Շուկայում գերիշխող դիրքը չարաշահող սուբյեկտի նկատմամբ որպես պատժամիջոց կիրառվում են նաև ոչ պակաս, քան վեց ամսվա ընթացքում դրա հարկադրական բաժանման, ինչպես նաև այլ սուբյեկտներին հասցված վնասը կրկնակի փոխհատուցելու մեխանիզմները:

Այսպիսով, ԱՊՀ երկրների հակամենաշնորհային և մրցակցային օրենսդրությունները ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների գործունեությունը կարգավորելու առումով ունեն նմանություններ և առանձնահատկություններ: Խնդիրը հնարավորության սահմաններում այդ օրենսդրությունների ներդաշնակեցումն է

Եվրոմիության մրցակցային օրենսդրությանը և, միաժամանակ, եղած դրական փորձը հաշվի առնելով, կարգավորման գործուն մեխանիզմների ստեղծումը:

РЕГУЛИРОВАНИЕ ГОСПОДСТВУЮЩЕГО ПОЛОЖЕНИЯ ФИРМ НА ТОВАРНЫХ РЫНКАХ СНГ

МИКАЕЛЯН Г. М.

Резюме

Изучение конкурентных законодательств стран СНГ выявило ряд проблем регулирования деятельности фирм, занимающих доминирующее положение на товарных рынках. Решение проблемы сводится к возможному согласованию конкурентных законодательств стран СНГ с законодательством Евросоюза. При этом должен быть учтен положительный опыт отдельных стран с целью выработки механизмов регулирования деятельности доминирующих фирм.